

ք. Թալին

«15» ապրիլի 2026թ.

Թալինի համայնքապետարան, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Միկարտ Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ավետիք Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաթնաղբյուր, Նոր Արթիկ բնակավայրերի մշակույթի տների վերանորոգման

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՀՀ ԱՄ ԹՀԳՀԱՇՁԲ-26/30»* ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **կողմերի միջև կնքվող պայմանագրի/ համաձայնագրի/ ուժի մեջ մտնելուց հետո 40-րդ օրը ներառյալ:**

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել „5...“ օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ

չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:¹

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:²

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:³

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

¹ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

² Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ

³ 4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:

4.3 Սթե վատարված աշխատանքը վառ դիմ սյուսանը չի ուսնապատասխանում պայմանագրի պայմանսսվյուս, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **20904000** (քսան միլիոն ինը հարյուր չորս հազար) ՀՀ դրամ, որից 3484000 (երեք միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 12996000 (տասներկու միլիոն ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ որից 2166000 (երկու միլիոն հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 7908000 (յոթ միլիոն ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ՝ որից 1318000 (մեկ միլիոն երեք հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:⁴

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով

⁴ Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից — (————) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:

լրտրուսվու դապքուս հայաստանի հասարակարկայան րիտանի անգաւսիւրի րիտանական սիւլուցսսիւրը հապալաուուրի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:⁵

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $ՎԳ = \text{ՄԳ} / \text{ՆԳ} \times ԿԾ$, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:⁶ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները⁷:

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

⁵ Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

⁶ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

⁷ Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային» բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կապարված հղումը:

	իրականացնում են մասնակատարողները, ինչպես նաև սյուշե շրջափառակա օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	
3	Հասարակության իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ծեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկական և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՓՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:⁸

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրից

⁸ Պեղական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

գտնվող ռալյուսի լուսարև փակվում գտնվող սահման Հայաստանի Հանրապետության օրենսդրության ռալյուսի լուսարև կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:⁹

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

⁹ Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝ «վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական փայլ» բառերով:

Ս.14 Սույն պայմանագրի վճարման և _____ էջից, գաբզու և սրբու օրվա վրա, ոլորտի ուսումնական հաստատության
իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1
և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի
Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045

ՀՀ 05080561
Համայնքի ղեկավար՝ Տ. Սեֆոյան



Ատտորագրություն
Մ.Ս

«Միկարտ Շին» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղիովիտ, 1փ
1 նրբ տ16

Բանկ Արդշինբանկ Մարտունի մ/6
ՀՀ 2476605383530000
ՖԱՍԹ ԲԱՆԿ ՓԲԸ Մարտունի մ/6
ՀՀ 2621976949831001

ՀՎՀՀ 08431088
Տնօրեն՝ Ա. Մուրադյան



Ատտորագրություն
Մ.Ս

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող
դրույթներ:

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԳԱՇԻՎ

**«ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ
 ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»**

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամեն հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		<u>Քանդման աշխատանքներ</u>	-	-		
1	11-225 լրացում	պատերի գաջե սվաղի քանդում	մ ²	107.00	1.2643	135.28
2	11-225 լրացում	առաստաղի գաջե սվաղի քանդում	մ ²	40.40	1.2643	51.08
3	13-5	պատերի կերամիկական սալիկների քանդում	մ ²	16.0	0.9715	15.54
4	46-88	վնասված միջնորմի քանդում թեթև բետոնե բլոկներից /1,2մ3/100մմ հաստության	100մ ²	0.12	132.0159	15.84
5	46-109	Կերամիկական հատակների քանդում	մ ²	22.70	0.6787	15.41
6	46-102	ՓԹՍ-ից հատակների քանդում	100մ ²	0.177	71.8103	12.71
7	23-169 23-170	հատակի ց/ավազյա հարթեցուցիչ շերտի քանդում 3սմ	100մ ²	0.404	66.0745	26.69
8	46-124	փայտե դռների ապամոնտաժում շրջանակներով	100մ ²	0.147	188.2957	27.68
9	10-70 գ-0,8	փայտե բեմի հիմնակմախքի քանդում /հանձնելով սեփականատիրոջը	մ ³	15.1	39.5515	597.23
10	19-70-Բ	Ջուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2	0.9715	1.94
11	19-1-Բ	պողպատե խողովակի կտրումհանում	գծմ	20.0	0.5323	10.65
12	19-54-Բ	Թուջե Փ100 խողովակների ապամոնտաժում	գծմ	5.0	1.4107	7.05
13	1-968	շին աղբի բարձում ինքնաթափին ձեռքով	մ ³	21.8	1.4905	32.49
14	հավելվ. , մաս2,աղ- յուսակ 3, կ.17	շին աղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 3կմ	տն	39.24	0.3154	12.38
		<u>Միջնորմներ</u>				

1	8-140	Միջնորմի շարուն բեթն բետոնե բլոկներով n=100մմ	մ ³	1.0	38.3240	38.32
2	շուկա	միջնորմների մեջ ց/ավազյա շաղախի լցում ուղղահայաց ձողերի տեղադրման հետ համատեղ	մ ³	0.7	39.5738	27.70
3	46-188 գ-0,2	հորիզոնական անցքերի շաղափում պատերում Ф10 L-100մմ	100 հատ	0.12	31.9177	3.83
4	46-156 գ-0,2	ուղղահայաց անցքերի շաղափում ե/բ առաստաղում Ф10 L-80մմ	100 հատ	0.04	24.7180	0.99
5	շուկա	ուղղահայաց ձողեր Ф8A240c	տն	0.006	336.1233	2.02
6	շուկա	հորիզոնական ձողեր Ф8A240c	տն	0.006	336.1233	2.02
7	շուկա	խարսխածողեր Ф8A240c	կգ	2.0	0.3361	0.67
8	6-170	Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 15 բետոնով	մ ³	0.05	99.7882	4.99
9	շուկա	Ամրան Ф6A240c	տն	0.0005	336.1233	0.17
10	շուկա	Ամրան Ф 12 A-500C	տն	0.0086	429.9848	3.70
		<u>Ներքին հարդարման աշխատանքներ</u>				
1	34-316 34-351 շուկա	„Արմատրոնգ„ տիպի կախովի առաստաղի նորոգում	մ ²	18.36	10.3523	190.07
2	11-179	առաստաղի լավորակ սվաղում գիպսոնիտե շաղախով	մ ²	40.4	5.7409	231.93
3	11-178	պատերի լավորակ սվաղում գիպսոնիտե շաղախով	մ ²	113.0	4.9249	556.51
4	11 -126	պատերի սվաղում ց/ա շաղախով	մ ²	42.0	2.2213	93.29
5	11-188	շեփերի լավորակ սվաղում գիպսոնիտե շաղախով	100մ ²	0.088	755.8110	66.51
6	11 -136	Ներքին շեփերի սվաղում ց/ա շաղախով	մ ²	2.4	5.4873	13.17
7	14-419	առաստաղի ներկում լատեքսային ներկով ծեփամածկումով	100մ ²	0.404	165.5254	66.87
8	11-57	պատերի սվաղի վերանորոգում գաջե շաղախով	մ ²	10.0	2.9476	29.48
9	14-418	Ներքին պատերի և շեփերի ներկում լատեքս ներկով ծեփամածկումով	100մ ²	1.318	145.2188	191.40
10	15-82	պատերի և շեփերի երեսապատում կերամիկական սալիկներով	100մ ²	0.444	996.1164	442.28

11	8-194	Ներքին փայտամածի ղատրաստում և քանդում հարդարման աշխատանքների համար	100մ ²	3.67	177.6390	652.29
		<u>Բացվածքներ</u>	-	-		
1	8-140	դռան բացվածքի լրացում թեթև բետոնե բլոկներով n=100մմ	մ ³	0.21	40.3332	8.47
2	շուկա	ներքին մետաղապլաստե բլոկով/սպիտակ/ խուլ դռան տեղադրում ,պրոֆիլի հաստ. 60մմ	մ ²	13.44	42.1426	566.40
		<u>Ֆատակներ</u>	-	-		
1	1-1183	բնահողի տոփանում մեխանիզմով	100մ ²	0.177	7.6787	1.36
2	5-67	խճի նախաշերտ 100մմ հաստ. /17,7մ2/	մ ³	1.77	17.7701	31.45
3	11-11	բետոնե նախաշերտ հատակների քանդված հատվածներում B12,5 դասի 100մմ հաստ.	մ ³	1.77	45.6087	80.73
4	11-55	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ ²	0.105	116.6490	12.25
5	8-174	ջրամեկուսացում 1 շերտ իզոգամով	մ ²	10.5	2.7081	28.43
6	11-55 11-56	Ց/ավազե հարթեց. շերտ 30մմ հաստ.	100մ ²	0.227	159.9288	36.30
7	11-55 11-56	Ց/ավազե հարթեց. շերտ 50մմ հաստ.	100մ ²	0.177	246.5016	43.63
8	5-115	հատակներ կերամիկական սալիկներից/չսահող/ սոսնձի վրա	մ ²	40.4	9.9318	401.24
9	11-135	շրիշակների կառուցում կերամիկական սալիկներից 10սմ բարձրությամբ	100մ ²	0.038	993.8691	37.77
10	5-118	հանդիսությունների դահլիճի և հետնաբեմի փայտե հատակների նորոգում 50մմ հաստությամբ տախտակից	մ ²	43.30	16.6784	722.17
11	15-563	հատակների նորոգված հատվածի յուղաներկում 2շերտ	մ ²	43.30	1.5387	66.62
		<u>Բեմի կառուցում</u>				
1	10-70	բեմի փայտե էլեմենտների տեղադրում /տողի շերտը ներառված 51,3մ2/	մ ³	16.60	246.0164	4083.87
2	10-201	բեմի փայտե կոնստրուկցիաների մշակում հակահրդեհային և հակամեխանական լուծույթով	մ ³	16.60	8.0978	134.42
3	15-663	բեմի փայտանյութի յուղաներկում 2շերտ	մ ²	115.6	1.6700	193.06
		<u>Ներքին ջրամատակարարում</u>	-	-		
1	16-262 գ-0,25	պոլիպրոպիլեն սառը ջրատար խողովակների տեղադրում Փ25 ,ձևավոր մասերի տեղադրմամբ , փորձարկումով	գծմ	6.0	1.5569	9.34

2	16-261 q-0,25	պոլիպրոպիլենե սառը ջինտար խողովակների տեղադրում $\Phi 20$, ձևավոր մասերի տեղադրմամբ , փորձարկումով	զծմ	3.0	1.4521	4.36
3	22-366 q-0,5	պոլիպրոպիլենե եռաբաշխիչ	հատ	3	1.4680	4.40
4	22-365 q-0,5	պոլիպրոպիլենե արմունկ /թեքում/	հատ	6	0.9831	5.90
5	16-135	պոլիպրոպիլենե փական $\Phi 25$ մմ	հատ	1	4.5342	4.53
6	16-135	պոլիպրոպիլենե փական $\Phi 20$ մմ	հատ	4	4.3660	17.46
7	շուկա	խողովակները ամրացնող մասեր $\Phi 25$	հատ	1	0.0594	0.06
8	շուկա	խողովակների ամրացնող մասեր $\Phi 20$	հատ	4	0.0396	0.16
9	22-399	միացում գործող ջրագծին	հատ	1	6.6360	6.64
10	23-39	Անցքի բացում միջնորմներում 100x100, L-100մմ	հատ	3	0.6920	2.08
11	23-115	Անցքի բացում բետոնե հիմքերում 200x200 մմ $L=600$ մմ	100 հատ	0.01	138.9494	1.39
12	շուկա	Պատյան ՊՎԲ խողովակից $\Phi 110$ մմ ,L-600մմ	մ	0.6	1.7930	1.08
13	շուկա	անցքի խցափակում B 12.5 բետոնով/1 հատ/	մ ³	0.01	42.7810	0.43
14	շուկա	առածգական նյութ պատյանի և խողովակի միջև	հատ	1	0.7610	0.76
<u>Ներքին կոյուղի</u>						
1	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	4.0	3.5666	14.27
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ ³	3.5	1.4905	5.22
3	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազով 100մմ	մ ³	0.2	11.7634	2.35
4	22-119	պոլիվինիլբլորիդե խողովակ-ների տեղադրում հողի մեջ $\Phi 110$	մ	6.0	2.2500	13.50
5	16-269 շուկա	պոլիվինիլբլորիդե խողովակների տեղադրում պատի վրա $\Phi 110$,ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	9.0	4.4059	39.65
6	16-265 շուկա	պոլիվինիլբլորիդե խողովակների տեղադրում պատի վրա $\Phi 50$,ձևավոր մասերի տեղադրմամբ	մ	2.0	3.5188	7.04
7	17-16 շուկա	ճենապակյա կերամիկական լվացարան կանգնակով	լրա- կազմ	2	21.9379	43.88
8	17-62 շուկա	Զուգարանակոնքի տեղադրում	լրա- կազմ	2	53.5262	107.05

9	22-366	պոլիվինիլբլորիդե ստնձատեղ Փ 110	հատ	1	3.4943	3.49
10	22-366	պոլիվինիլբլորիդե մաքրիչ Փ 50	հատ	1	2.9676	2.97
11	շուկա	եռաբաշխիչ պոլիվինիլբլորիդե Փ 110 x 110 x 110	հատ	2	0.9741	1.95
12	շուկա	եռաբաշխիչ պոլիվինիլբլորիդե Փ 110 x 110 x 50	հատ	1	0.6849	0.68
13	շուկա	եռաբաշխիչ պոլիվինիլբլորիդե Փ 50 x 50 x 50	հատ	2	0.3364	0.67
14	շուկա	արմունկ պոլիվինիլբլորիդե Փ 110 x 110	հատ	3	0.6606	1.98
15	23-39	Անցքի բացում միջնորմներում 200x200, L-100մմ	հատ	3	0.6920	2.08
16	23-119	Անցքի բացում ե/բետոնե ծածկերում 200x200մմ, L=300մմ	100 հատ	0.02	546.6550	10.93
17	23-116	Անցքի բացում բետոնե հիմքերում 400x400 մմ L=600մմ	100 հատ	0.01	393.8386	3.94
18	շուկա	Պատյան պոլիվինիլբլորիդե խողովակից Փ200մմ L-600մմ /1 հատ/	մ	0.6	3.1705	1.90
19	շուկա	անցքերի խցափակում B 12.5 բետոնով/1 հատ/	մ ³	0.01	42.7810	0.43
20	շուկա	առածգական նյութ պատյանի և խողովակի միջև	հատ	1	0.7610	0.76
<u>Ներքին լուսավորություն</u>						
Ուժային էլեկտրասարքավորումների մոնտաժում						
1		Բաշխիչ վահան 380/220V, 50A կազմված՝	լրակազմ	1		
1.1	8-612-2	վահանակ պոլիստիրոլե 12մոդուլ	հատ	1	14.2427	14.24
1.2	8-525-1	միաբևեռ ավտոմատ անջատիչ Շդասի 6kA կոմուտացիոն ունակությամբ, 220վ 40Ա /բաշխման/	հատ	2	6.1582	12.32
1.3	8-525-1	միաբևեռ ավտոմատ անջատիչ Շդասի 6kA կոմուտացիոն ունակությամբ, 220վ 16Ա /բաշխման/	հատ	3	5.6514	16.95
1.4	8-525-1	դիֆավտոմատ անջատման սարք Շդասի 2P,AC տիպի , 30mA ,16A ,6kA	հատ	1	10.7244	10.72
1.5	8-525-1	դիֆավտոմատ անջատման սարք Շդասի 2P,AC տիպի , 30mA ,25A ,6kA	հատ	1	10.7244	10.72
2	8-591-7	երկստեղ վարդակ շտեպսելային երկբևեռ 3-րդ հողանցման հպակով 220V 16A IP20 փակ փակ տեղադրման	100 հատ	0.05	167.4046	8.37
3	8-591-7	վարդակ շտեպսելային երկբևեռ 3-րդ հողանցման հպակով 220վ 16A IP20 փակ տեղադրման	100 հատ	0.10	167.4046	16.74

4	21-45 q-0,5	ակոսի բացում	մ	350.0	0.2529	88.50
5	11-57	ակոսների սվաղ գաջե շաղախով	100 մ ²	0.105	351.4488	36.90
6	46-189	Անցքի բացում $\Phi 25$ մմ , $l=400$ մմ , մալուխի անցկացման համար	100 հատ	0.01	148.7441	1.49
7	10-975-8	տուփ անջատիչի և վարդակի փակ տեղադրման	100 հատ	0.27	172.1474	46.48
8	10-975-8	տուփ բաժանարար փակ տեղադրման	100 հատ	0.20	172.1474	34.43
9	23-48	փորակի բացում վարդակի,անջատիչի և բաժանման տուփերի համար	հատ	47	0.8384	39.41
10	23-48	խոռոչի բացում 335x285x80մմ /1հատ/	մ ³	0.01	30.1694	0.30
11	8-400-2	պղնձե քիղերով չայրվող ՊՎՔ մեկուսացումով մալուխի տեղադրում $4 \times 4 \times 3 \times 2,5$ մմ ²	մ	115.0	2.5594	294.33
12	8-400-2	պղնձե քիղերով ՊՎՔ մեկուսացումով մալուխի տեղադրում $4 \times 4 \times 3 \times 4$ մմ ²	մ	30.0	2.8745	86.23
13	8-400-2	պղնձե քիղերով ՊՎՔ մեկուսացումով մալուխի տեղադրում $4 \times 4 \times 3 \times 6$ մմ ²	մ	20.0	3.4179	68.36
14	շուկա	խողովակ ՊՎՔ /գոֆրա/ $d=25$ մմ	մ	20.0	0.3044	6.09
15	շուկա	մալուխային ամրակ	հատ	1100	0.0311	34.16
<u>Լուսավորության էլեկտրասարքավորումների մոնտաժում</u>						
